Social Security

Կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստներ

www.socialsecurity.gov

Կապվեք Սոցիալական Ապահովության վարչության հետ

Այցելեցեք Մեր Կայքէջը

Մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** պարունակում է Սոցիալական Ապահովության ծրագիրների լրիւ տեղեկությունները: Այս կայքէջում նաեւ կարող եք՝

- դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստներ ստանալու համար,
- ծանոթանալ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության անձնական հաշվետվությանը*),
- գտնել ձեր տեղական Սոցիալական Ապահովության Գրասենեակի հասցէն.
- պահանջել Medicare-ի նոր քարտ և
- գտնել մեր հրատարակությունների օրինակները.

Այս ծառայություններից մի քանիսը հասանելի են միայն անգլերեն լեզվով:

Զանգահարեք մեր անվճար հեռախոսահամարով

Բացի մեր կայքից օգտվելուց կարող եք նաև զանգահարել մեզ անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով: Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Որպես կանոն, զանգահարողներն ավելի կարճ են սպասում, եթե զանգահարում են շաբաթվա մեջ երեքշաբթիին հաջորդող օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ: Եթե Դուք խուլ եք կամ թույլ լսողություն ունեք, ապա կարող եք զանգահարել մեր հեռատիպի (TTY) համարով՝ **1-800-325-0778**:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Բովանդակություն

Կերակրողին կորցնելու կապակցությամբ Սոցիալական ապահովության ապահովագրության կարեւորությունը 4

Եթե դուք աշխատում եք ... ինչ պետք է իմանաք կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստների մասին 4

Երբ մահանում է աղգականը ... դուք ինչ պետք է իմանաք կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստների մասին 8

Կերակրողին կորցնելու կապակցությամբ Սոցիալական ապահովության ապահովագրության կարեւորությունը

Ընտանիքի կերակրողին կորուստը կարող է լինել ավերիչ, թե՝ հոգեպես, թե՝ ֆինանսապես: Սոցիալական ապահովությունը օգնում է, եկամուտ ապահովելով մահացած աշխատողների ընտանիքների համար: Փաստացի, 100-ից 98 երեխան կարող է նպաստներ ստանալ, եթե մահանում է աշխատող ծնողը: Եվ Սոցիալական ապահովությունը վճարում է ավելի շատ նպաստներ երեխաներին, քան որեւէ այլ դաշնային ծրագիր:

Սույն գրքույկը ձեզ տալիս է մահացած աշխատողի կնոջը (ամուսնուն) եւ երեխաներին վճարվող կերակրողին կորցնելու կապակցության Սոցիալական ապահովության նպաստների ակնարկը: Սույն գրքույքը նախատեսված չէ ձեզ մոտ առաջացող բոլոր հարցերին պատասխանելու համար: Կերակրողին կոցնելու կապակցությամբ Սոցիալական ապահովության ծրագրի մասին լրացուցիչ տեղեկատվության համար այցելե՝ք մեր վեբ կայքը կամ զանգահարե՝ք մեր ավճար հեռախոսահամրներով:

Եթե դուք աշխատում եք ... ինչ պետք է իմանաք կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստների մասին

«Կյանքի ապահովոգրություն» Սոցիալական պահովությունից

Բազում մարդիկ մտածում են Սոցիալական ապահովության որպես կենսաթոշակային ծրագրի մասին: Սակայն ձեր կողմից վճարվող Սոցիակական ապահովության հարկերից մի մասը ուղղվում է կերակրողին կորցնելու կապակցությամբ աշխատողների եւ նրանց ընտանիքների անդամների ապահովագրության ապահովմանը: Փաստացի, կերակրողին կորցնելու կապակցությամբ ապահովագրության արժեքը, որը դուք ունեք Սոցիալական ապահովության ներքո, հավանաբար ավելի բարձր է, քան ձեր անհատական կյանքի ապահովությունը:

Ձեր մահվան դեպքում ձեր ընտանիքի որոշ անդամներ կարող են բավարարել կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստների պահանջներին: Նրանց շարքում են այրի կանայք, այրի տղամարդիկ (եւ ամուսնալուծված այրի կանայք եւ այրի տղամարդիկ), երեխաները եւ խնամքի տակ գտնվող ծնողները:

Ես ինչպե՞ս եմ ստանում կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստները

Ձեր աշխատելու եւ Սոցիալական ապահովության հարկերը վճարելու ընթացքում դուք ստանում եք կրեդիտներ հօգուտ Սոցիալական ապահովության ձեր նպաստների: Աշխատանքային տարիների քանակը, որն անհրաժեշտ է ձեր ընտանիքին, որպեսզի այն բավարարի կերակրողին կորցնելու կապակցությամբ Սոցիալական ապահովության նպաստների պահաջներին, կախված է ձեր մահանալու տարիքից: Որքան երիտասարդ է անձը, այդքան նվազ աշխատանքային ստաժի կարիք նա ունի: Սակայն, առհասարակ կերակրողին կորցնելու կապակցությամբ Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին բավարարելու համար բավական է ունենալ մինչեւ 10 տարվա աշխատանքային ստաժ:

Հատուկ պայմանի համաձայն, եթե ձեր մահվանից անմիջապես առաջ երեք տարվա ժամանակամիջոցում դուք աշխատել եք միայն մեկ ու կես տարի, ապա ձեր երեխաներին եւ ձեր կնոջը (ամուսնուն), որը խնամում է ձեր երեխաներին, կարող են վճարվել նպաստներ:

Ո՞վ կարող է Ձեր աշխատանքի հիմքով կերակրողի մահվան կապակցությամբ նպաստներ ստանալ:

- **Ձեր այրին** կարող է ամբողջական նպաստ ստանալ՝ լրիվ կենսաթոշակային տարիքում: Կերակրողի մահվան դեպքում նպաստ ստացողի լրիվ թոշակային տարիքը 66-ն է՝ 1945-ից մինչև 1956 թվականը ծնված անձանց դեպքում: Այդ տարիքն աստիճանաբար կբարձրանա մինչև 67-ը՝ 1962թ. կամ ավելի ուշ ծնված անձանց դեպքում: 60-ը լրացած այրիները կարող են կրճատված նպաստ ստանալ: Եթե մահացած կերակրողի կինը կամ ամուսինը հաշմանդամ է, ապա նա իրավասու է նպաստ ստանալու 50 տարեկանում: Այրիների և մահացած կերակրողի ընտանիքի մյուս իրավասու անդամների մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք ***www.socialsecurity.gov/survivorplan*** կայքէջը:
- **Ձեր այրին** կարող է ցանկացած տարիքում նպաստ ստանալ, եթե նա հոգ է տանում սոցիալական ապահովության նպաստ ստացող՝ մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ Ձեր երեխայի մասին:

- **Ձեր ամուրի զավակները** մինչև 18 տարեկան (կամ մինչև 19 տարեկան՝ եթե հաճախում են տարրական կամ միջնակարգ դպրոցի մոտակա բաժին) նույնպես կարող են նպաստ ստանալ: Ձեր զավակները կարող են նպաստ ստանալ ցանկացած տարիքում, եթե մինչև 22 տարեկանը դարձել են հաշմանդամ և այդպիսին մնում են: Որոշ դեպքերում նպաստներ կարող են վճարվել **խորթ երեխաներին, թոռներին, խորթ թոռներին կամ որդեգրված երեխաներին:**
- **Ձեր խնամարկյալ ծնողները** կարող են նպաստ ստանալ, եթե առնվազն 62 տարեկան են: (Որպեսզի Ձեր ծնողներն ըստ ծրագրի խնամարկյալ համարվեն, Դուք պետք է տրամադրած լինեք իրենց ֆինանսավորման առնվազն կեսը:)

Մահացած կերակրողի ամուսնալուծված կանանց և ամուսիններին վճարվող նպաստներ

Եթե Դուք ամուսնալուծված եք եղել, Ձեր նախկին կինը կամ ամուսինը՝ սկսած 60 տարեկանից (50-ից 59-ը՝ եթե հաշմանդամ է) կարող է նպաստ ստանալ այն դեպքում, եթե Ձեր ամուսնությունը տևել է առնվազն 10 տարի: Այնուամենայնիվ, Ձեր նախկին կինը/ամուսինը պարտավոր չէ ենթարկվել տարիքի և ամուսնության տևողության կանոններին, եթե նա հոգ է տանում մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ երեխայի մասին, որը նույնպես իրավասու է նպաստ ստանալու՝ Ձեր աշխատանքի հիմքով: Այդ երեխան պետք է լինի Ձեր նախկին կնոջ կամ ամուսնու հարազատ զավակը կամ օրինական կարգով որդեգրված երեխան:

Կերակրողի մահվան կապակցությամբ Ձեզ վճարվող նպաստները՝ որպես այրու, ով բավարարում է տարիքի կամ անաշխատունակության պահանջներին, չեն ազդի հանգուցյալի ընտանիքի մյուս նպաստառուների նպաստի չափի վրա: Սակայն եթե Դուք մահացած կերակրողի ծնող եք, ով հոգ է տանում նրա՝ մինչև 16 տարեկան կամ հաշմանդամ զավակի մասին, ապա Ձեր նպաստը կազդի կերակրողի ընտանիքի մյուս նպաստառու անդամների նպաստի չափի վրա:

Որքա՞ն է կազմում նպաստը:

Թե որքան կստանա Ձեր ընտանիքը Սոցիալական ապահովությունից՝ կախված է Ձեր ողջ կյանքի եկամուտի միջինից: Որքան շատ վաստակած լինեք, այնքան մեծ կլինի նպաստի չափը:

Ստուգեք *Social Security Statement* (*Սոցիալական ապահովության Ձեր հաշվետվությունը*), որն ուղարկվում է սոցիալական ապահովության նպաստ չստացող 60 և ավելի տարեկան անձանց: Եթե Դուք 18 կամ ավելի տարեկան եք, ապա *Հաշվետվությունը* կարող եք ստանալ առցանց: *Հաշվետվությունում* գնահատված են կերակրողի մահվան կապակցությամբ, ինչպես նաև կենսաթոշակային և անաշխատունակության նպաստների չափերը, և տրված են կարևոր այլ տեղեկություններ: Ձեր *Հաշվետվությունն* ստուգելու համար կարող եք ստեղծել առցանց հաշիվ՝ այցելելով մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov/mystatement***:

Մահվան դեպքում վճարվող միանվագ վճարումը

Գոյություն ունի 255 դոլարի միանվագ վճարում, որը կարող է վճարվել ձեր մահվան դեպքում, եթե դուք աշխատել եք բավականաչափ երկար: Այդ վճարը կարող է վճարվել միայն ձեր կնոջը (ամուսնուն), եթե նա բավարարում են որոշակի պահանջներին:

Երբ մահանում է աղգականը ... դուք ինչ պետք է իմանաք կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստների մասին

Ես ինչպես եմ դիմում նպաստների համար

Եթե դուք ներկայում Սոցիալական ապահովության նպաստներ չեք ստանում

Դուք պետք է անհապաղ դիմեք կերակրողին կորցնելու կապակցությամբ նպաստի համար, որոշ դեպքերում նպաստները վճարվելու են ձեր դիմելու պահից, այլ ոչ աշխատողի մահվան պահից:

Դուք կարող եք դիմել հեռախոսով կամ Սոցիալական ապահովության ցանկացած գրասենյակում: Մեզ կպահանջվի որոշակի տեղեկատվություն, սակայն մի՝ հետաձգեք դիմելը, եթե դուք ինչ-որ բան չունեք: Մենք ձեզ կօգնենք ստանալու այն, ինչի կարիքը ունեք: Մեզ անհրաժեշտ են կամ փաստաթղթերի բնօրինակները կամ դրանք տված գործակալությունների կողմից վավերացված պատճենները:

Այդ տեղեկատվությունը ներ է առնում.

- Մահվան ապացույցը՝ կամ թաղման բյուրոյից կամ մահվան վկայականը.
- Ձեր Սոցիալական ապահովության համարը, ինչպես նաեւ մահացած աշխատողինը.
- Ձեր ծննդյան վկայականը.
- Ձեր ամուսնության վկայականը, եթե դուք այրի կին եք կամ այրի տղամարդ եք.
- Ձեր ամուսնալուծության փաստաթղթերը, եթե դուք դիմում եք որպես այրի կին կամ այրի տղամարդ.
- Խնամքի տակ գտնվող երեխաների Սոցիալական ապահովության համարները՝ առկանության դեպքում՝ ծնբյան վկայագիր.
- Մահացած աշխատողի «W-2» ձեւերը կամ ինքնազբաղի դաշնային հարկային հայտարարագիրը ամենավերջին տարիների համար, ինչպես նաեւ
- Ձեր բանկի անվանումը եւ ձեր հաշվի համարը, որպեսզի ձեր նպաստները հնարավոր լինի մուտքագրել ուղղակիորեն ձեր հաշվի վրա:

Եթե դուք ստանում եք Սոցիալական ապահովության նպաստներ

Եթե Դուք ստանում եք նպաստ՝ Ձեր կնոջ/ամուսնու աշխատանքի հիմքով, Ձեզնից նրա մահվան մասին տեղեկանալուց հետո, մենք կփոխենք Ձեր նպաստը՝ կերակրողի մահվան կապակցությամբ վճարվող նպաստի: Լրացուցիչ տեղեկությունների կարիք ունենալու դեպքում մենք կապ կհաստատենք Ձեզ հետ:

Եթե Դուք ստանում եք նպաստ՝ Ձեր սեփական աշխատանքի հիմքով, ապա զանգահարեք կամ այցելեք մեզ, և մենք կստուգենք՝ արդյոք Ձեր նպաստն այրիանալու դեպքում կավելանա: Եթե այո, ապա Դուք կստանաք նպաստների համակցություն, որը հավասար կլինի ավելի մեծ գումարին: Կերակրողի մահվան կապակցությամբ նպաստի անցնելու համար պետք է դիմում լրացնեք և ներկայացնեք Ձեր կնոջ/ամուսնու մահվան վկայականը:

Ես որքա՞ն եմ ստանալու

Նպաստի գումարը հիմնվում է մահացածի հասույթի վրա: Որքա՞ն շատ է աշխատողը վճարել Սոցիալական ապահովությանը, այդքան շատ կլինեն ձեր նպաստները:

Սոցիալական ապահովության վարչությունն ըստ մահացած աշխատողի հիմնական նպաստի գումարի հաշվում է, թե դրա որքան տոկոսի իրավունքն ունեն նրա ընտանիքի իրավասու անդամները: Այդ տոկոսը կախված է նրանց տարիքից և հանգուցյալի ու նրանց միջև եղած կապից: Եթե հանգուցյալը կրճատված նպաստ էր ստանում, ապա նրա մահվան կապակցությամբ վճարվող նպաստը հիմնված կլինի այդ գումարի վրա:

Ստորև բերված են առավել բնորոշ իրավիճակները.

- Այրի կինը կամ այրի տղամարդը՝ լրիվ կենսաթոշակային կամ ավելի մեծ տարիքում, ստանում է աշխատողի բազային նպաստի գումարի 100 տոկոսը.
- Այրի կինը կամ այրի ամուսինը՝ 60 տարեկանում կամ ավելի մեծ տարիքում, ստանում է աշխատողի բազային նպաստի գումարի 71-ից 99 տոկոսը կամ
- Այրի կինը կամ այրի ամուսինը՝ ցանկացած տարիքում, որն ունի 16 տարեկանից փոքր երեխա, ստանում է աշխատողի նպաստի գումարի 75 տոկոսը կամ

- Երեխաները ստանում են աշխատողի նպաստի գումարի 75 տոկոսը:

Առավելագույն ընտանեկան նպաստները

Ձեզ եւ ընտանիքի այլ անդամներին ամեն ամիս վճարվող նպաստների նկատմամբ գործում է որոշակի սահման: Սահմանը տատանվում է, սակայն սովորաբար այն գտնվում է մահացածի նպաստի գումարի 150-ից 180 տոկոսի միջեւ:

Կենսաթոշակներ Սոցիալական ապահովությամբ չընդգրկված աշխատանքներից

Եթե դուք ստանում եք կենսաթոշակ այն աշխատանքից, որտեղ դուք վճարել եք Սոցիալական ապահովության հարկեր, ապա այդ կենսաթոշակը չի ազդելու ձեր Սոցիալական ապահովության նպաստների վրա: Սակայն, եթե դուք ստանում եք կենսաթոշակ մի աշխատքնահց, որը ընդգրկված չէ Սոցիալական ապահովությամբ՝ օրինակ, դաշնային քաղաքացիական ծառայությունը, նահանգային կամ տեղական իշխանության ոլորտի զբաղվածությունը կամ աշխատանքը արտասահմանում, ապա ձեր Սոցիալական ապահովության նպաստը կարող է կրճատվել:

Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարեգք Սոցիալական ապահովությանը, խնդրելով հետեւյալ հրապարակումները. *Government Pension Offset* (*Կառավարական կենսաթոշակի փոխհատուցումը,* հրախարակում թիվ 05-10007, մատչելի է միայն անգլերենով)՝ կառավարական աշխատողների համար, որոնք կարող են բավարարել Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին ամուսնու կամ կնոջ հասույթի հաշվառմամբ եւ *Windfall Elimination Provision* (*Չնախատեսված եկամուտի բացառման ապահովումը,* հրախարակում թիվ 05-10045, մատչելի է միայն անգլերենով)՝ այն մարդկանց համար, որոնք աշխատել են այլ երկրում կամ կառավարական աշխատողների համար, որոնք նաեւ բավարարում են իրենց իսկ Սոցիալական ապահովության նպաստների պահանջներին:

Ինչ եթե ես աշխատում եմ

Եթե կերակրողին կորցնելու կապակցությամբ Սոցիալական ապահովության նպաստները ստանալու հետ մեկտեղ դուք աշխատում եք եւ դուք լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, ապա ձեր նպաստները կարող են կրճատվել,

եթե ձեր հասույթը գերազանցում է որոշակի սահմանները: (Լրիվ կենսաթոշակային տարիքը 1938թ.-ից առաջ նշվածների համար կազմում էր 65 տարեկանը, սակայն 1960թ.-ին կամ ավելի ուշ ծնվածների համար այն աստիճանաբար կաճի մինչեւ 67 տարեկանը): Որպեսզի որոշեք, թե որոնք են հասույթի սահմանները ընթացիկ տարվա համար եւ ինչպե՞ս են այդ սահմանները գերազանցող հասույթները կրճատում ձեր Սոցիալական ապահովության նպաստները, դիմե՛ք մեզ եւ խնդրե՛ք *Ինչպե՞ս Է Աշխատանքը Ազդում Ձեր Նպաստների* հրատարակությունը (հրախարակում թիվ 05-10069-AM):

Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքին հասնելուց հետո *հասույթի սահման գոյություն չունի*:

Դրանից բացի, ձեր հասույթը կրճատելու **է միայն** ձեր նպաստները, այլ ոչ ընտանիքի այլ անդամների նպաստները:

Ինչ եթե ես կրկին ամուսնանամ

Որպես կանոն դուք չեք կարող ստանալ ձեր այրի կնոջ կամ այրի ամուսնու նպաստները, եթե կրկին ամուսնանում եք մինչեւ 60 տարեկանը: Սակայն 60 տարեկանից (կամ 50 տարեկանից՝ եթե դուք հաշմանդամ եք) հետո կրկնակի ամուսնությունը թույլ չի տալու ստանալ ձեր նախկին կնոջ (ամուսնու) աշխատանքի հիման վրա նպաստի վճարումները: Իսկ 62 տարեկանում եւ ավելի մեծ տարիքում դուք կարող եք ստանալ նպաստը ձեր նոր կնոջ (ամուսնու) աշխատանքի հիման վրա, եթե այդ նպաստները ավելի բարձր կլինեն:

Բողոքարկելու իրավունքը

Եթե համաձայն չեք Ձեր հայտի վերաբերյալ կայացված որոշմանը, ապա կարող եք բողոքարկել այն: Բողոքարկելու համար անհրաժեշտ գործողությունները նկարագրված են *Բողոքարկման Ընթացքը* (հրախարակում թիվ 05-10041-AM) հրապարակման մեջ:

Դուք կարող եք անձամբ բողոքարկել՝ Սոցիալական ապահովության վարչության անվճար օգնությամբ, կամ կարող եք օգտվել ներկայացուցչի օգնությունից: Մենք Ձեզ տեղեկություն կտրամադրենք այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են օգնել Ձեզ ներկայացուցիչ գտնել: Ներկայացուցիչ ընտրելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեք *Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը* (հրախարակում թիվ 05-10075-AM) հրապարակումը:

www.socialsecurity.gov

Social Security Administration
SSA Publication No. 05-10084-AM
Survivors Benefits (Armenian)
July 2012